ՄԵՐԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

«ՀԱՆՑԱՎՈՐ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ» ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԿԻՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՆԵՐԻ ՄՈՏ

Անհերքելի ճշմարտություն է, որ հասարակությունը հանցավորությունը համարում է չարիք: Հանցագործը, հատկապես կին, դեռահաս, ընկալվում է որպես խաթարված անձնավորություն, իսկ նրա բարոյական որակները՝ որպես աղավաղված և անհամապատասխան հասարակության մեջ ընդունված նորմերին: Իրավունքի, օրենքի պահպանման նկատմամբ նրանց դրական վերաբերմունքի մասին խոսք լինել անգամ չի կարող: Հասարակության մեջ շատ են նաև «երկակի բարոյականությամբ» մարդիկ, որոնք խոսում են բարոյական բարձր արժեքների, նորմերի պահպանման անհրաժեշտության մասին, բայց իրենց իսկ դատողություններին անհամապատասխան վարք դրսևորում: Հոգեբանական տեսանկյունից դիտարկելով՝ այն կարող ենք համեմատել իմացական աններդաշնակության հետ[1]:

Քրեաբանության, իրավաբանական և մասնավորապես քրեաբանական հոգեբանության մեջ հայտնի «հանցավոր բարոյականություն» ֆենոմենը երկակի բարոյականության» տարատեսակն է: «Հանցավոր բարոյականությունն» անձի համար ծառայում է որպես կատարված հանցագործությունների արդարացման, կեղծ արժեքներն ու սուտը որպես ճշմարտություն ներկայացնելու միջոց:

Մեր կարծիքով, կին հանցագործները, ինչպես հանցագործներն ընդհանրապես, հաճախ օգտագործում են հիմնավոր փաստարկներ՝ շրջապատում սեփական անբարո և քրեածին գործողությունները արդարացնելու նպատակով: Այսինքն՝ ստեղծում են բարոյականության յուրատիպ պատկերացում՝ «հանցավոր բարոյականություն», որը դառնում է իրենց հանցավոր վարքը պատճառաբանելու և արդարացուցիչ հանգամանքներ, փաստարկներ ներկա-

[1] իմացական ներդաշնակություն (կոգնիտիվ դիսոնանս)-մարդու այն վիճակը, որն առաջ է գալիս, երբ նրա գիտակցության մեջ ներկայացված են լինում երկու իմացական «միավորներ» (դատողություններ, նույն երևույթի վերաբերյալ տեսակետներ), որոնք անհամատեղելի են, աններդաշնակ([2;80]):

յացնելու միջոց: «Հանցավոր բարոյականության» երևույթը կայուն ձևով դիտվում է հանցավոր խմբերում, կրկնահանցագործ, անբարո արարքներ կատարած մարդկանց մոտ: Սույն աշխատանքի շրջանակներում մեզ առավելապես հետաքրքրում են ոչ թե «հանցավոր բարոյականությամբ» անձը՝ իր «դատողություններով», այլ նրա մոտ վերջինիս ձևավորման ընթացքի որոշ մեխանիզմներ, որոնք նախորդում են հանցավոր արարքին: Համաձայն Ս.Արզումանյանի՝ հանցավոր գործողությանը նախորդում է մի փուլ, որի ընթացքում անձը բարոյալքվում է, և նրա հետ կատարվող անբարենպաստ փոփոխությունները առաջին հերթին արտահայտվում են օրենքի, իրավունքի և բարոյականության նկատմամբ այլափոխված պատկերացումներում, համոզմունքներում և վերաբերմունքներում ([4; 86]):

Սույն հոդվածում կփորձենք ներկայացնել կին հանցագործների մոտ «հանցավոր բարոյականության» ձևավորման մեխանիզմները և հիմքերը, որոնք նպաստում են այս արատավոր երևույթի առաջացմանը և հանցավորության աճին:

Կանանց «հանցավոր բարոյականության» վերաբերյալ առաջին դիտարկումները կատարել է Չ.Լոմբրոզոն՝ ընդգծելով կանանց մոտ «բարոյական խաթարվածություն»՝ moral insanity, հոգեկան խաթարման տարատեսակի առկայությունը[2]: Նման արատներով հանցագործ և մարմնավաճառ կանայք, ըստ Լոմբրոզոյի, իրենց արարքներն արդարացնող փաստարկներ են ներկա-

---

[2] Այս հասկացությունը Վեբսթերի /1913թ./բառարանում մեկնաբանվում է որպես բարոյական ոլորտի խեղաթյուրում, որը դատական համակարգում ենթադրում է անմեղսունակություն: Բուվիրեսի իրավաբանական բառարանում բարոյական խաթարվածությունը համարվում է դատական բժշկության մեջ կիրառվող հատուկ տերմին,, որը սակայն դատական պրակտիկայում դեռևս կիրառելի չէ: Բարոյական խաթարվածությունը բարոյական զգացումների, կապվածության, սովորությունների, հակումների և բարոյական տրամադրվածության հիվանդագին խաթարվածությունն է, որը չի ենթադրում ինտելեկտի, գիտելիքների համակարգի կամ դատողություններ կատարելու ունակության որևէ էական խաթարումներ և մասնավորապես որևէ մանիակալ հալյուցինացիաների առկայություն / Prichard, art. Insanity, in Cyclopaedia of Practical Medicine / 2. Մեկ այլ մոտեցմամբ, գոյություն ունեն մարդիկ, որոնց մոտ բարոյական «օրգանների » բացակայության պատճառով արդարության նորմերի նկատմամբ այնքան անտարբեր են այնպես, որքան խուլերը երաժշտության նկատմամբ /Combe, Moral Philosophy, Lect. 12. / 3. Որոշների կարծիքվ այս հիվանդությունը արտացոլում է անհաղթահարելի հակում դեպի սպանությունների կատարումը, մյուսների մոտ դեպի գողությունը / Annals D'Hygiene tom. i. p. 284. /: Moral insanity-ի հասկացությունը առաջին անգամ 1835թվականին ներկայացրել է հոգեբույժ Պրիչարդը և ընդգծել, որ միայն հոգեկան խաթարման այս տեսակով տառապող մարդկանց հանցագործությունները իրենց կատարման հոգեբանական մեխանիզմներով տարբերվում են ինտելեկտի խանգարումներ ունեցող հոգեկան հիվանդների կատարած հանցագործություններից:

յացնում՝ ամեն ինչ վերագրելով սոցիալական պայմաններին, աղքատությանը, խաբվելուն և այլ արտաքին գործոններին: Իրականում այս խաթարումները բնածին են և ընդհանրապես կապված չեն ինտելեկտի զարգացման մակարդակի հետ ([10;236]): «Հանցավոր բարոյականության» երևույթի ուսումնասիրությունները (Կարպեց Ի.Ի.[5], Կուդրյավցև Վ.Ն. [3] [8], Դոլգովա Ա.Ի.[6]) հիմնականում կապված են հանցավոր միջավայրում/ սուբկուլտուրայում/ տիրող և նրանց հանցավոր արարքները կարգավորող բարոյական նորմերի համակարգի ուսումնասիրությունների հետ: Մեզ առավել հետաքրքրում են այն ապակառուցողական գործընթացները, որոնք տեղի են ունենում անձի բարոյական գիտակցության մեջ, բարոյականության՝ որպես վարքի կարգավորիչի ֆունկցիաների աշխատանքում՝ հանգեցնելով «հանցավոր բարոյականության» ձևավորմանը: Յու. Անտոնյանը այս հիմնախնդրին առնչվող իր ուսումնասիրությունների արդյունքում նշում է, որ անցումային շրջանում մարդկանց բարոյական գիտակցության մեջ դիտվում են որոշակի այլափոխումներ, որոնք ունեն հետևյալ միտումները.

1. պահպանվում են բարոյական վարքի նախորդ սերունդների չափանմուշները:
2. այդ չափանմուշներից փաստացի հրաժարում՝ կյանքի դժվարությունների հետ բախվելիս,
3. «գործարար շրջանակներում» ստեղծվում են բարոյական նոր նորմեր:
4. Ցանկացած բարոյական նորմի բացառում՝ միաժամանակ հակահասարակական և հանցավոր վարքի արդարացում, եթե այն բերում է դրական արդյունք(շահ),
5. «ինքնավար բարոյականության» անորոշություն, որը հիմնակնում գիտակցաբար թաքցվում է շրջապատող մարդկանցից:

Այս ամենը հանգեցնում են բարոյական անոմիայի վիճակի, որը կապված է իրավական նորմերից և պահանջներից խուսափելու մոտիվացիայի հետ և նպաստում է հանցավորության աճին ([3;76-77]): Յոգեբանության մեջ հաստատված է, որ անձնավորության վարքը միշտ ունի իր մոտիվացիան, հետևաբար կարելի է առանձնացնել նաև բարոյական մոտիվացիան որպես բարոյական վարքի կարևոր բաղադարարր:

Բարոյական մոտիվացիան սուբյեկտի կողմից որևէ արարքի պայմանավորումն (դետերմինավորումն) է([7,135-140]), որը դրսևորվում է պարտքի և պատասխանատվության մեխանիզմում: Բարոյական մոտիվացիան կատարում է գնահատման, խթանման, պաշտպանական - արդարացնող, կանխատեսող ֆունկցիաներ: Վերջիններիս խաթարումները բերում են բարոյական մոտիվացիայի այլափոխումների, աղավաղումների: Մեր համոզմամբ, *բարոյական*

մոտիվացիայի այլափոխումները «հանցավոր բարոյականության» ձևավորման հոգեբանական նախադրյալներից մեկն է: Նման դեպքերում անձը բացառում է իր համար բարոյապես արժեքավոր որոշակի գործողությունները՝ հասարակական նորմերին ոչ համարժեք արարքներ չկատարելու պատասխանատվությունից զերծ մնալու համար: Գործում են *չեզոքացման և անհատական պատասխանատվությունից խուսափելու մեխանիզմները,* որոնք դրսևորվում է հետևյալ փաստարկներում *«բոլորն են այդպես անում», «միայն այս անգամ»,* «դա իմ ուժերից վեր է», «ինչու՞ ես, թող ուրիշներն անեն», «նա ինքն է մեղավոր», «ես չգիտեի, որ դա սխալ է»: Այս մեխանիզմի օգնությամբ անձն իր արարքը կապում է արտաքին՝ կայուն (աղքատություն) կամ անկայուն (հարբեցողություն) պատճառների հետ: Հակահասարակական, անբարո արարք, հանցագործություն կատարելու դեպքում անձը ներկայացնում է արդարացումներ՝ օգտվելով կոնկրետ մեխանիզմներից: Չեզոքացումը դրսևորվում է տարբեր եղանակներով և դրանց համապատասխան փաստարկներով:

Բարոյական մոտիվացիայի այլափոխումների այլ մեխանիզմներ է ներկայացրել սոցիալական ուսուցման տեսության ներկայացուցիչ Ա. Բանդուրան ([11]): Ըստ նրա՝ այդ մեխանիզմների միջոցով, որոնք ըստ էության կարող են դիտարկվել նաև որպես անձի հոգեբանական ինքնապաշտպանության մեխանիզմներ, մարդիկ փորձում են հիմնավորել իրենց՝ բարոյական և իրավական նորմերին անհամապատասխան վարքը: Ըստ Բանդուրայի, անձը բարոյական նորմերի միջոցով իր վարքի բարոյական վերահսկողության գործընթացի որոշ փուլերում կարող է շեղվել հասարակայնորեն ընդունելի վարքի շրջանակներից: Հակահասարակական արարքների արդարացման համար անձը օգտագործում է *բարոյական արդարացումները, էֆեմիստական պիտակավորումը, դրական համեմատությունը, պատասխանատվության տեղափոխումը, պատասխանատվության անորոշությունը (դիֆուզությունը), արդյունքների անտեսումը,* որոնք, ըստ մեզ, լիովին կիրառվում են նաև կին-հանցագործների կողմից բարոյական դեգրադացիայի տարբեր փուլերում:

Բարոյական արդարացում: Որպես կանոն, կին հանցագործները հիվանդագին են տանում իրենց կատարած վատ արարքները, քանի դեռ չեն սկսել արդարացնել իրենց անձի ու գործողությունների բարոյական լինելը ([12]): Բարոյական արդարացման մեխանիզմն օգտագործելով՝ նրանք իրենց ներկայացնում են անձնապես և սոցիալականորեն ընդունելի ([12]): *Բարոյական արդարացումներ* օգտագործելիս մարդը շրջապատին ներկայացնում է, որ կատարում է վեհ բարոյական պարտականություններ: Օրինակ, վերջին տարիներին կին մահապարտների արաքները Միջին Արևելքում, հանցագործություններ են, սակայն արդարացվում են որպես «Աստծո կամքի» իրականացում:

Բարոյական արդարացումների մեխանիզմը հանցագործներն օգտագործում են, երբ կատարած արարքը ներկայացվում է որպես սեփական գաղափարների պաշտպանության միջոց:

Էվֆեմիստիկ պիտակավորում: Սա հնարավորություն է տալիս քողարկելու անբարո վարքը, իր արարքին նույնիսկ հարգալից կարգավիճակ վերագրելով ([11]): Էվֆեմիզմի (լեզվի մաքրագործում) ([11]) միջոցով նույնիսկ սպանության կատարումը կարող է կորցնել իր բացասական իմաստը: *Էվֆեմիստիկ պիտակավորումը* հիմնականում կիրառվում է հանցավոր խմբավորումներում «նոր անդամներին» փորձությունների ենթարկելիս: Փորձությունների ենթարկման դաժան ձևերը հանցավոր խմբի անդամները արդարացնում են այս մեխանիզմից օգտվելով: Մեր կարծիքով հիմնականում այն օգտագործում են կավատներն ու խարդախները:

Դրական համեմատություն: Վարքը կարող է տարբեր բնույթ կրել՝ կախված նրանից, թե ինչի հետ է համեմատվում: Կիրառելով դրական համեմատության հայեցակարգը՝ նույնիսկ քննադատելի արարքները կարելի է ներկայացնել որպես ճշմարտություն: Հանցագործները ֆիզիկական ագրեսիայի, բռնության կիրառման, ինչպես նաև տարբեր հանցագործությունների միջև համեմատություններ կատարելիս կարողանում են իրենց արարքը ավելի «լավը» ներկայացնել (օրինակ՝«ես սպանել եմ սիրեկանիս, իսկ Ա.-ն իր երեխային, հիմա որն է ավելի վատ):

Պատասխանատվության տեղափոխում: Կին հանցագործների բարոյալքման մեխանիզմում պատասխանատվությունից խուսափման օգտագործումը տեղի է ունենում այն դեպքերում, երբ նրանք չեն եղել հանցագործությունների նախաձեռնողներն ու կազմակերպիչները, և բարոյական պատասխանատվության տեսանկյունից արարքը դիտարկելիս՝ իրենց ներկայացնում են ուղղակի որպես «գործիք»,տուժող կողմ:

Պատասխանատվության դիֆուզություն: Բարոյալքման գործընթացում անձի մոտ բարոյական վերահսկողությունը թուլանում է, երբ անհատի գործողությունները խեղաթյուրվում են բացասական արարքի համար պատասխանատվության դիֆուզությամբ: Այս մեխանիզմը գործում է հիմնականում խմբակային հանցագործությունների կատարման ընթացքում, երբ կինը կարողանում է իր կատարած հակահասարակական արարքի պատասխանատվությունը տարածել բոլորի վրա, բացի իրենից: Շատ դեպքերում խմբի անդամները չգիտեն ինչի համար են պայքարում, բայց պայքարում են, որովհետև խումբն է պահանջում:

Արդյունքների անտեսում: Ըստ Բանդուրայի՝ երբ մարդը հակահասարակական արարք է կատարում, փորձում է խուսափել վնասից, կամ հասցնել

այն նվազագույնի: Երբ վերջինս տեղի չի ունենում, նա (հանցագործը) սկսում է արժեզրկել այդ վնասը ([12]): Անտեսման այս մեխանիզմով է բացատրվում, թե ինչու է հաճախ տեղի ունենում զոհի ուղղակի բացառում կամ առաջանում ատելություն նրա նկատմամբ:

Մի շարք այլ ուսումնասիրություններ / Անոտնյան Յու.Մ.[3], Կուդրյավցև Վ.Ն.[3], Էմինով Վ.Ե. [3], Լևադա Յու. Լ. [9])փաստում են, որ «հանցավոր բարոյականությունը» խաթարված բարոյագիտակցության արդյունքն է, որը հաստատվում է նաև բարոյալքման գործընթացի ներկայացված մեխանիզմներ միջոցով:

Մեր հետազոտական տվյալների նախնական վերլուծությունը թույլ է տալիս հավաստելու, որ հանցավոր արարք կատարելիս այդ խաթարումները կարող են ընթանալ մի քանի ձևով.

1. Անձը յուրացնում է բարոյական նորմերի՝ ամբողջությունը, սակայն վերջիններս որոշակի իրադրություններում ոչ մի ազդեցություն չեն ունենում նրա վարքի վրա:
2. Անձը բարոյական նորմերը յուրացնում է աղճատված, որը ունի իր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները:
3. Անհատը բացասական դիրքորոշում է ունենում բարոյական նորմերի կամ նրա մեծ մասի նկատմամբ՝ հենվելով այլ արժեքների վրա:
4. Անհատը բացասական վերաբերմունք է ունենում բարոյական նորմերի և արժեքների նկատմամբ և իրեն դուրս բերում դրանց ներգործության դաշտից:

Դրանցից յուրաքանչյուրի դեպքում անձի բարոյական գիտակցության մեջ որոշակի օրինաչափություններով ընթանում է «հանցավոր բարոյականության» ձևավորումը,ապա նաև հանցավոր վարքի դրսևորումը: Դրան նպաստում են նաև անձի որոշակի կարողությունների բացակայությունը: Հիմք ընդունելով կանանց բարոյական զարգացման առանձնահատկությունների վերաբերյալ մոտեցումները (Ձիլլիգան Կ.[14], ԳամփԼ.Ս. [15]) և բարոյական դատողությունների մտահասության ախտորոշմանն ուղղված մեր ուսումնասիրությունների արդյունքները՝[3] գտնում ենք, որ *կին հանցագործների մոտ «հանցավոր բարոյականության» ձևավորման մյուս, ոչ պակաս կարևոր հոգեբանական նախադրյալը բարոյական դատողությունների մտահասության ցածր մակարդակն է*: Սրա հետևանքով կինը չի կարողանում կողմնորոշվել այն բարոյական երկընտրանքներում, որոնք առաջ են գալիս իր իսկ բարոյական

---

[3] Բարոյական դատողությունների կոմպետենտության ախտորոշման վերաբերյալ ավելի մանրամասն տես՝ Ավետիսյան Մ.Գ.,Անձի բարոյական զարգացման հայեցակարգերը և դրա մակարդակի ախտորոշման ուղիները ,Հոգեբանությունը և կյանքը, ,1-2,2006,էջ 89-97:

սկզբունքերի ու իրավական նորմերի ընտրության միջև և փորձում է իր կատարած հանցավոր արարքի համար փաստարկներ գտնել: Այդ փաստարկները հաճախ հիմնավորված չեն, անկայուն և անկանոն են:

Այսպիսով, «հանցավոր բարոյականության» ձևավորումը կին հանցագործների մոտ կարող է պայմանավորված լինել անձի վարքի *բարոյական մոտիվացիայի այլափոխումներով, որոնք տեղի են ունենում տարբեր մեխանիզմների միջոցով և բարոյական դատողությունների մտահասության ցածր մակարդակով:*

Գրականության ցանկ

1. Ավետիսյան Մ.Գ. Անձի բարոյական զարգացման հոգեբանական հայեցակարգերը և դրա մակարդակի ախտորոշման ուղիները, « Հոգեբանությունը և կյանքը», 1-2, 2006, էջ89-97
2. Նալչաջյան Ա.Ա.Հոգեբանական բառարան, Երևան, 1984:
3. Антонян Ю.М., Кудрявцев В.Н., Эминов В.Е., Личность преступника,СПб. 2004.
4. Арзуманян С.Д.Психолого-криминологическая теория становления личности правонарушителя "Зангак-97", Ереван, 2000.
5. Карпец И.И. Наказание:Социальные, правовые и криминологические проблемы.М., 1973.
6. Криминология /Под ред.А.И. Дологовой, М. 2000.
7. Крутова А.А. Мораль, личность, поведение. Архангельск.1986.
8. Кудрявцев В.Н.,Преступность и нравы переходного общества, М., 2002.
9. Левада Ю.Л. Homo Post-Soveticus // Общественные науки и современность.2000. N 6
10. Ломброзо Ч. Женщина, преступница и проститутка // Гениальность и помешательство. Пер. с итальянского. – Ростов н/Д, 1998.
11. Bandura , A. (1991) .Social cognitive theory of moral thought and action, in" W. M.
12. Bandura , A. (2002). Selective moral disengagement in the exercise of moral agency, *Journal of Moral Education, 31(2)* pp.101-119.
13. Gilligan, C. (1982). In a different voice: Psychological theory and women's development. Cambridge, MA: Harvard University Press.
14. Gump, L. S. (2000). The moral justification scale: reliability and validity of a new measure of care and justice orientations., AdolescenceSpring.